«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Դաստիարակ՝ Անահիտ Վիրաբյան

Մանկապարտեզ՝ « Քաղսիի » ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
Հետազոտության նպատակը 3
ԳԼՈՒԽ 1: ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ, ԾԵՍԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 4
1.1 Ի՞ՆՉ Է ԾԵՍԸ 4
1.2 ՏՈՆԱԿԱՆ ԾԵՍԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ և ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ 4
ԳԼՈՒԽ 2: ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ, ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ 6
ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ 7
ԴԻՏԱՐԿՈՒՄ 14
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 15
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ազգ ունի իր ազգային ծեսերը և դրանք կազմակերպելու և իրականացնելու սովորույթները: Հայ ժողովրդի համար նվիրական է ազգասիրության, հայրենասիրության գաղափարը, որը պետք է սերմանել երեխաների մեջ մանկուց և փոխանցել սերնդեսերունդ: Կրթելով ու դաստիարակելով, ծանոթացնելով ազգային տոներին, ծեսերին ու սովորույթներին՝ արդյունքում կունենանք ազգասեր, հայրենասեր երեխաներ. <<ՈՒր որ հայրենիքը երկեր կըլուսնի, հոն հայրենիքը ողջ է>> (Ղ. Ալիշան):[1] Տոնական ծեսերը և ծիսական գործողությունները նախադպրոցական տարիքում երեխայի կողմից ընկալվում է, որպես խաղ, դերախաղ:

Հետազոտության նպատակը

- Ընտրել և ավագ խմբում փորձարկել ազգային տոների, ծեսերի և ծիսական գործունեության խաղեր, երգ-պարեր, ազգային Ամանորի արարողակարգ:
- ՈՒսումնասիրել և վերհանել հին ու մոռացված ազգային խաղերն ու սովորույթները, երեխային դարձնել ազգային ծեսը կրողը, փոխանցողն ու տարածողը:
- Գործնական փորձարկման միջոցով ծանոթացնել ազգային տոներին և ծեսերին՝ երեխային մասնակից դարձնելով դրան:
- Եթե մանկապարտեզում միշտ կիրառվի ազգային տոների, ծեսերի կազմակերպում, ապա ծեսերը մոռացության չեն մատնվի և մշտապես արդիականություն կդառնան, որովհետև դա ազգի կայացման և ազգի հարստության հիմքերից մեկն է՝ մշակութային մեծ ժառանգություն:

Աշխատանքը ունի հետևյալ բաժինները. Ներածություն, Գլուխ 1, Գլուխ 2, Պարապմունքի պլան, Դիտարկում, Եզրակացություն, Գրականության ցանկ:

[1] Տե՛ս, Ղ. Ալիշան <<Հին հավատք կամ հեթանոսական կրօնք հայոց>> էջ 302

ԳԼՈՒԽ 1: ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ, ԾԵՍԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1 Ի՞ՆՉ Է ԾԵՍԸ

Կրթական համակարգի հենց առաջին օղակից՝ մանկապարտեզից է սկսվում մանկան աշխարհաճանաչմանն ուղղված տարրական գիտելիքների յուրացումը: Ազգային ծեսերի, տոների իրականացումը դառնում է յուրացման համար հենակետերից մեկը, քանի որ այն արդյունավետ կազմակերպման ձևերից է, ամբողջությամբ խաղ է և գործողությունների շարան: Ծես հասկացությունը սովորաբար ընկալվում է հաստատուն գործունեության հետևողականություն, որը ունի արարողական բնույթ և լայնորեն տարածում ունի կրոնում, կենցաղում և այլուր: Ծեսը խորհրդանշական ձևով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարած իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնությունը: Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Ծեսերը անգնահատելի դեր ունեն՝ յուրովի լրացնելով ավանդույթի ընդհանուր կողմերը, որի շնորհիվ ավանդույթը դառնում է միասնական մի ամբողջություն:

1.2 ՏՈՆԱԿԱՆ ԾԵՍԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ և ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ

Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ, որտեղ նրանք դառնում են այս ամենը կրող և ակտիվ փոխանցող: Ազգային ծեսերն այն միջավայրն է, որը մանկան ընդհանուր զարգացման համար ստեղծում է պարարտ հող: Ծեսն այն միջավայրն է, որը երեխային հնարավորություն է տալիս խաղալով ինքնադրսևորվել, յուրացնել ծանոթ և անծանոթ երևույթները, հասկանալ դրանց դերն ու նշանակությունը, իրենց վրա վերցնել պատասխանատվություն, հերթով գործողություններ կատարել՝ ձեռք բերելով զիջելու կարողություն: Խաղերի միջոցով տոնական ծեսերը դառնում են ավելի տպավորիչ և հասանելի, որոնք զարգացնում են երեխաների ուշադրությունը, հիշողությունը, երևակայությունը, հաղորդակցումը, լսելու կարողությունը, ընկալումը, վերլուծելու համադրելու, ճիշտ կողմնորոշումը, ինքնուրույն

աշխատելու ունակությունը, հարստանում է բառապաշարը, զարգանում է խոշոր և մանր մոտորիկան՝ ընդհանուր շարժողական համակարգը: Ծիսական խաղերը ազդում են երեխայի խոսքի, սոցիալական, ինչպես նաև մտավոր և հուզական զարգացման վրա: Ազգային ծիսական երաժշտությունը, պարը նպաստում և ամբողջականացնում են ծեսերի և տոների պատկերացումները: Երեխաների մոտ ձևավորվում է բարձր ճաշակ, ազդում զգացմունքների վրա: Նրանք սիրով և ջերմությամբ են կատարում երգերը, պարերը, խաղիկները, ինչի միջոցով էլ արտահայտում են իրենց հրճվանքն ու ուրախությունը: Ծիսական երգերը իրենց մեջ պարունակում են արարողակարգեր, որոնց շնորհիվ երեխաները գովում են մեկը մյուսին, նվերներ փոխանակում, ինչն էլ երգ ու երաժշտության հետ համատեղ ավելի են նպաստում սոցիալական զարգացմանը: Տոնական ծեսերի կիրառման ընթացքում օգտագործված խաղային հիմնական մեթոդներն են՝

- իրավիճակների խաղարկումը
- դերախաղը
- խմբային աշխատանք։

ԳԼՈՒԽ 2: ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ, ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

Հայոց ազգային տոները տարբեր ժամանակներում տարբեր դրսևորումներ և վերաիմաստավորումներ են ունեցել: Սակայն այս տոների արմատներն այնքան խորն են եղել ժողովրդի ինքնագիտակցության մեջ, որ ժամանակի փոփոխությունները նույնպես չեն կարողացել ազդել դրանց վրա: Մենք մանկավարժներս, պարտավոր ենք ըստ արժանվույն կատարել մեզ վստահված գործը, այսինքն՝ հայ մանուկներին դաստիարակել հայեցի և քրիստոնեաբար:

> *<<Երեխան բաց աչքերով նայում է հրաշք աշխարհին, և թե ի՞նչ կլսի ու կտեսնի, կախված է մեզանից>>: (Ա. Շահինյան)*

ՈՒսումնական տարվա ընթացքում գործնականորեն կիրառվում են տեսական դրույթները՝ համոզվելով, որ իրոք տոների և ծեսերի իրականացումը կարևոր նախապայման և հարմար միջավայր են երեխաների ազգային արժեքները ճանաչելու, կրելու և այն սերնդեսերունդ փոխանցելու համար: Երեխաները քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում ամենօրյա արդյունավետ աշխատանքի շնորհիվ դառնում են լիիրավ մասնակիցներ և ձեռք բերում որոշակի կարողություններ և հմտություններ: Տյարն Ընդառաջին երգելով աղանձ են բովում և ձևավորում, Բարեկենդանին թխում միջինք և ոգևորված համտեսում ու սպասում, թե ո՞վ է լինելու խմբի հաջողակը, Ծաղկազարդին ուռենու ժյուղերով միասին պսակներ ենք հյուսում և գնում եկեղեցի, քահանան օրհնության կարգ է կատարում: Զատկի տոնին ընդառաջ ածիկի ցորեն ցանում, նախշազարդում տոնական ձվերը, ձևավորում կանաչ ծիլերի և ուռենու ճյուղերի վրա: Երգերի, խաղիկների, պարերի հետ զուգահեռ խաղում զատկական մրցակցային խաղեր, հրաժեշտ տալիս Ակլատիզին և ՈՒտիս տատին, որոնք պատրաստվում են Մեծ Պահքը սկսվելուն պես: Համբարձման տոնին յոթ աղբյուրից ջուր է բերվում, յոթ տեսակ ծաղիկ քաղվում և ձևավորվում փարչը, պսակներ հյուսվում, վիճակի երգերով բախտ գուշակվում:

Մեծերը մանկանում են , հասնում մեր ազգային ակունքներին, խաղում և ճաշակում կաթնապուրը: Ստեղծվում է բարության և սիրո մթնոլորտ:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ

Թեման՝ <<Ազգային Ամանոր>>

Տեսակը՝ ինտեգրված՝ խոսքի զարգացում + երաժշտություն

Նպատակը՝

1.Ամրապնդել երեխաների իմացածը և տալ նոր գիտելիքներ ազգային տոների, ծեսերի մասին:

2.Զևավորել գեղագիտական ճաշակը:

3.Զարգացնել գեղագիտական հույզեր և զգացմունքներ պարերի և երգերի կատարման գործընթացում:

4.Զարգացնել երեխայի կապակցված խոսքը:

Նախապատրաստական աշխատանք՝

Երեխաների հետ նախօրոք անցկացնել զրույցներ <<Ազգային Ամանոր>> տոնի, նրա սովորույթների, անցկացման ձևերի մասին: Սովորեցնել երգեր, պարեր, ամանորյա բարեմաղթանքներ, պատրաստել ձեռքի աշխատանքներ ազգային Ամանոր թեմային նվիրված, նախշազարդել թեմատիկ նկարներ:

Երեխաների հետ միասին պատրաստել ամանորյա չարխափաններ՝ չարխափանի ծիսական խաղը խաղալու համար:

Դաստիարակի հետ միասին թխել տարեհաց և բլիթներ՝ մարդու, մկրատի, մատնոցի, քսակի, խնոցու, հավի տեսքով, որոնք անվանում են ասիլ-բասիլներ:

Անհրաժեշտ նյութեր՝

Պտղատու ծառի ճյուղեր՝ <<Կաղանդի ծառ>> զարդաելու համար, ընդեղեն, չրեղեն, գունավոր թելեր, սկուտեղով տարեհաց, ասիլ-բասիլներ, ավազե ժամացույց, տեսանյութեր ամանորյա ծեսերի, սովորույթների վերաբերյալ: Գունավոր գուլպաներ, պարկեր, բուխարի կրակի տեսարանով, գերան(ծեսը բեմադրելու համար): Փոքր կուժով մեղր մեջը փայտից գդալ, ափսեով ալյուր, կարմիր շոր(շեմը օրհնելու համար): Նախօրոք պատրաստված չարխափաններ, Կաղանդ պապի նվերներ երեխաների թվով: ՈՒնենալ <<Քերծի>>, <<Փափուռի>>, <<Բուլուլ>> պարերի երաժշտությունների ձայնագրությունները նաև <<Ամեն տարի հասնինք բարով Ավետի՛ս >>, <<Կաղանդ պապա, Նոր տարի, Ամանոր>> երգերի ձայնագրությունները:

Անցկացման վայրը՝

Դահլիճ, որտեղ դրված են երկու սեղաններ ազգային տարազով սփռոցներով, առաջին սեղանին դրված են գունավոր պարկեր և գուլպաներ՝ երեխաների թվով, զարդարանքի պարագաներ: Երկրորդ սեղանին դրված են երեխաների թխած ասիլ-բասիլները և տարեգաթան (նախօրոք կտրված լինի ժյուրիի անդամների թվով, որպեսզի երեխաները հյուրասիրեն): Առանձին սեղանի վրա դրված լինեն երեխաների պատրաստած չարխափանները՝ խաղը խաղալու համար: Երեխաները հագած լինեն ազգային տարազներ: Դահլիճը ձևավորված լինի ազգային ոգով, ինչպես նաև երեխաների ձեռքի աշխատանքներով:

Պարապմունքի ընթացքը՝

Ժյուրիի անդամներին դիմավորել դահլիճի մուտքի դռան մոտ՝ շեմը օրհնելու արարողությամբ (երկու երեխա՝ աղջիկ և տղա, տատիկ, պապիկի կերպարներով): Աղջկա ձեռքին՝ փոքր կուժ, մեղրով, մեջը փայտե գդալ, թևին գցած կարմիր շոր, տղայի ձեռքին՝ ալյուրով լի ափսե:

Ցածրաձայն հնչի <<Քերծի>> ազգային պարի ձայնագրությունը:

Աղջիկ – Կարմիր օրով, կարմիր շորով, թո բարով գա թազա տարին, թո իմ ժողովուրդ խաղաղություն ունենա, թող շեմն օրհնված լինի ու Նոր տարին բարի լինի: (Փայտե գդալով մեղրով խաչ անի դռանը, կարմիր շորն էլ փռի դռան վրա)

Տղա – Էս շեմն օրհնված լինի, ձեր նման բարի մարդիկ գան: (Ալյուրով խաչ անի դռան վրա)

Տղա – Հնում հայերը հավատում էին. <<Ինչպես սկսեն Նոր տարին, այնպես էլ կշարունակեն>>: Նոր տարվա շեմը պետք է հատել միայն ուրախ ծեսերով:

<<Քերծի>> երեժշտության ներքո ժյուրիի անդամները ներս գան նստեն:

<<Փափուռի>> պարով երեխաները մտնում են դահլիճ, տեղավորվում ըստ երկու ենթախմբերի սեղանների շուրջ և ողջունում ներկաներին (ժյուրիի անդամներին):

Առաջին խումբ – Կաղանդ

Երկրորդ խումբ – Տարեմուտ

Դաստիարակ – Երեխաներ, այսօրվա մեր պարապմունքը խաղ-վիկտորինա է: Եկեք հիշենք, թե ի՞նչ ենք սովորել և ի՞նչ գիտենք ազգային Ամանորի, ամանորյա

սովորույթների և ծեսերի մասին:

Առաջին փուլ

Դաստիարակ – Հարցս ուղղում եմ Կաղանդ խմբին, հարցին պատասխանեն մի քանի երեխաներ:

Նոր տարին ընտանեկան տոն է, ի՞նչ գիտենք այս տոնի մասին:

Հարցի պատասխանը մտածելու, քննարկելու և ներկայացնելու համար տրվում է ժամանակ:

Պատասխան - Նոր տարին ընտանեկան տոն է, որ խորհրդանշում է ընտանիքի ամրությունը, նրա անդամների փոխադարձ հարգանքը, հարգալից վերաբերմունքը տարեցների նկատմամբ: Ընտանիքի հայրը առաջինն էր իր զավակներից աջ համբույրով ընդունում Ամանորի շնորհավորանքները: Ամեն ընտանիք սպասում էր, որ առաջին դուռը բացողը, իր տուն մտնողը լինի բարի մարդ <<**ձեռը թեթև, ոտքը խերով**>>:

Տարեմուտ խումբ

Հարց 2 – Ինչպե՞ս են հնում կոչել Ամանորը:

Պատասխան – Տոնի անունները տարբեր են եղել՝ Տարեմուտ, Տարին գլուխ, Նոր տարի, Կաղանդ, Կաղինդ, Կալոնտար, Նավասարդ:

Կաղանդ խումբ

Հարց 3 – Հնում ինչպե՞ս էին պատրաստվում Ամանորին:

Պատասխան – Ամանորին նախապատրաստվելիս ոչ միայն մաքրում էին բնակարանները, այլև հնարավորինս դուրս էին նետում անպետք իրերը, նորոգում էին քանդված մասերը: Կանայք բուրդ էին գզում, թել մանում՝ կապելով հին տարին նոր տարու հետ, դրանցով գուլպաներ էին գործում տան բոլոր անդամների համար: Ընտանիքի անդամները լողանում էին, նոր հագուստ և գուլպաներ հագնում, որ նորով ոտքը բարի լինի Նոր տարում:

Տարեմուտ խումբ

Հարց 4 – Ի՞նչ կերակուրներ են պատրաստել Ամանորին:

Պատասխան – Պետք է հիշել, որ հունվարի 1-ը ընկնելով Սուրբ Ծննդյան տոնի շաբաթվա մեջ, պաս օր էր, և ամանորյա ուտելիքները բաղկացած էին պասի

կերակրատեսակներից, օրինակ՝ հատիկեղենից քյուֆթա, պասուց տոլմա, ծեծած կորկոտ, չամիչով, չոր ծիրանով և սալորով մարիամապուր, լոբով, ավելուկով կերակուրներ: Սեղանին ջանում էին դնել յոթ տեսակ թարմ միրգ, ընդեղեն, պաստեղներ, չրեղեն, աղանձ, մաքրած ընկույզի, նուշի, բոված կանեփի, չամիչի, բոված սիսեռի հետ խառնած:

Թխում էին <<Տարի հաց>>, <<Կրկենի>>, <<Դովլաթ կրկենի>>, <<Կլոճ>>, <<Տարին>> կարող էր լինել գաթա, բաղարջ՝ կլոր կամ խաչաձև: Կերակրատեսակների պատրաստումը ուղեկցվում էր երգ ու պարով:

Երկրորդ փուլ

Դաստիարակ – Երեխաներ դիտեք հոլովակը և յուրաքանչյուր խումբ ներկայացրեք, ի՞նչ ծիսական ավանդույթներ են ցուցադրված:

Կաղանդ խումբ – Այս հոլովակում ներկայացված է Նոր տարվա կամ Կաղանդի գիշերը երեխաներից կազմված խմբերով տնետուն ման գալը, երգերի ու խաղիկների միջոցով տան անդամների տարին շնորհավորելը, ու փոխարենը նվերներ ստանալու սովորույթը: Երեխաները երդիկից կախվելով շնորհավորական բարեմաղթանքներ հղելով, միաժամանակ գուլպա, գործած տոպրակ կամ կողով էին կախում երդիկից, ասելով.

- *Լոս, լոս կալանդոս, կալանդոսը եկել է, կալանդոս տվեք:*
- *Շնորհավոր Նոր տարի, աղեկություն տուն արի, ամեն տարի բարով հասնի, շնորհավոր ձեր Ներ տարին, կալանդոս տվեք:*
- *Շալե շապիկ հագել է, շալե գոտիկ կապել է, կալանդոս տվեք:*

Տանտիկինները չիր ու չամիչ, ընկույզ ու միրգ կամ քաղցրավենիք էին դնում դրա մեջ, երբեմն տատիկները կատակում էին և իջեցված տոպրակի մեջ կոշիկ կամ կատու էին դնում: Երեխաները վերցնեն սեղանին դրված պարկերն ու գուլպաները, և <<Բուլուլ>> երաժշտության ներքո մոտենան ժյուրիի անդամներին և ասեն շնորհավորական բարեմաղթանքներ, որպեսզի իրենց պարկերի և գուլպաների մեջ նվեր դնեն (իսկ ժյուրիի անդամները նախօրոք տեղեկացված լինեն և իրենց մոտ ունենան՝ միրգ, չրեր, քաղցրավենիք,

խաղալիք փիսիկ, որպեսզի դնեն պարկերի մեջ):
Շնորհավորական բարեմաղթանքներ.

Բարով թող գա ձեր Նոր տարին,
Մուրազները ձեր կատարի,
Ձեր տուն մտնի հազար բարին,
Աճար, ցորեն, կորեկ, գարի:

Լիքը օրեր շատ ունենաք,
Կարմիր օրեր շատ ունենաք,
Կարմիր օրով, կարմիր շորով
Որախ կենաք միշտ կուշտ փորով:

Այս գեղեցիկ ծեսը հայտնի է <<Կախու կախուկ>>, <<Գոտեկախ>> անուններով:
Տարեմուտ խումբ – Այս տեսանյութում թխում են գուշակության հացեր, որոնք ձևավորվում են, թե տան անդամների պատկերներով, թե իրենց գործունեությունը բնորոշող պատկերներով՝ մկրատի տեսքով, մատնոցի, քսակի, խնոցու, հավի,կովի գլխի տեսքով խմորներ և թոնրում թխելով սպասում են, թե որը կուռչի նշանակում է հաջողությունը այդ տարի, որ կողմից պիտի գա իրենց տուն: Այս գուշակության հացերը կոչվում են ասիլ-բասիլներ:
Երաժշտական դադար – երեխաները երգեն <<Տատիկ զալուր կմաղե>> երգը:
(Այս ընթացքում Տարեմուտ խմբից մի աղջիկ իրենց թխած ասիլ-բասիլները բաժանի ժյուրիի անդամներին):
Երեխա – Այս ծիսական տիկնիկները չեն ուտում պահում են ամբողջ տարին: Ծիսական տիկնիկները իրենց վրա են վերցնում ամբողջ տարվա բացասական էներգիան:
Կաղանդ խումբ – Այս տեսանյութում ներկայացված է Տարեմուտի քոթուկի ավանդույթը, դեռ Տարեմուտի երեկոյան տան նահապետը մեծ գերան էր դնում օջախի մեջ, այդ գերանը պիտի վառվեր Ամանորի գիշերվանից մինչև Քրիստոսի ծննդյան տոնը:
Երաժշտություն - <<Ամեն տարի հասնինք բարով Ավետի՜ս>> Այս երգի ներքո մի տղա երեխա մոտենա բուխարուն, մի գերան վերցնի և դնի կրակի վրա

ասելով հետևյալ խոսքերը: Երեխա - <<Փառքդ շատ լինի, իմ օջախը թող անմար լինի և բոլոր հայոց օջախները թող միշտ վառ մնան>>[2]: Տարեմուտ խումբ – Այստեղ թխում են տարեհացը, որի մեջ անակնկալ կա՝ լոբի, կորիզ կամ դրամ: Տանտիկինը <<Տարին>> դնում է սկուտեղի վրա և դուրս գալիս տնից, թեքվում է դեպի արևելք և դովլաթ է կանչում, ապա տուն է մտնում, վրայի մեղրը բաժանում բոլորին, իսկ <<Տարին>> պահում ծննդյան տոնի նախորդ օրը տան բոլոր անդամների, հաճախ նաև արտի, հանդի, կենդանիների թվով կտրելու համար և ասում. <<ՈՒմ էլ ընկնի դովլաթը, թող բարով ընկնի, թող խերով դիմավորի տարին>>:
Երաժշտական դադար, երգեն <<Հաց կթխեմ>> երգը (Այս երգի ներքո տարեհացը մի երեխա հյուրասիրի ժյուրիի անդամներին և տեսնեն, թե ում բաժնի մեջ է անակնկալը և ո՞վ է այդ տարվա հաջողակը): **Երրորդ փուլ**
Դաստիարակ – Երեխաներ մենք այստեղ ունենք պտղատու ծառի ճյուղեր (որը դրված է դահլիճի մեջտեղում), իսկ ձեր սեղաններին կան ընկուզեղեն, շարոցներ, չրեր և գունավոր թելեր: Դուք պետք է գեղեցիկ զարդարեք ծառ խնկենին: Երեխաները <<Խնկի ծառ>> երգելով զարդարեն ճյուղերը: Երեխա – Ըստ ավանդույթի, խնկի ծառը զարդարում են չրերով, քաղցրավենիքներով, բոլորը երազանք պահելով օգտվում են ծառից: Այժմ դուք էլ երազանք պահեք և օգտվեք ծառի բարիքներց (հրավիրում է ժյուրիի անդամներին): Ներս է գալիս Կաղանդ պապը, շնորհավորում բոլորի Ամանորը.

- Շնորհավոր ձեր Նոր տարին, առատ, ուրախ, խաղաղ ու անկոտրուն տարի լինի, բարով հասնեք մեկ էլ էս օրվան, առողջ ու երջանիկ լինեք:

Դաստիարակ – Երեխաներ, մենք ի՞նչ գիտենք չարխափանների մասին:
Պատասխան – Ամանորին Հայաստանի որոշ վայրերում դրանով հմայում, հեռացնում էին բոլոր չարիքները: Չարխափանը պատրաստում էին պոպոքից, շրխկացնում և հավատում, որ հենց այդ շրխկոցն էլ վախեցնում և քշում է չարին, բոլոր հիվանդությունները, անհաջողությունները, չարիքներն այդ աղմուկից փախչում են

[2] Տե՛ս, Ս.Ս. Մկրտչյան <<Տոներ>>, Երևան էջ 17-19

հեռու:

Դաստիարակ – Եկեք մենք էլ խաղանք այդ խաղը և չարիքներին հեռու տանենք մեզանից:

Բոլորը միասին խաղում են խաղը: Հետո Կաղանդ պապը նվերներ է բաժանում երեխաներին և միասին պարում են շուրջպար <<Կաղանդ պապա, Նոր տարի, Ամանոր>> երգի ներքո:

Ժյուրիի անդամները շնորհակալություն են հայտնում լավ աշխատանքի և իրենց հյուրասիրելու համար:

ԴԻՏԱՐԿՈՒՄ

Տնօրեն՝ Ասպրամ Ավագյան

- Արդյո՞ք դաստիարակը հասավ պարապմունքի նպատակներին և ո՞ր կարողությունների զարգացմանն էին ուղղված աշխատանքները:
  -Դաստիարակը հասավ իր առջև դրված նպատակնեին, որոնք ուղղված էին ազգային արժեքների պահպանմանը, հոգևոր դաստիարակությանը և իմացածը գրագետ ներկայացնելուն:
- Ինչպե՞ս էին զգում իրենց երեխաները:
  -Երեխաները անկաշկանդ էին, ազատ մեկնաբանում և տալիս էին լիարժեք պատասխաններ, քանի որ խորքային ուսումնասիրել էին մեր ազգային ծեսերն ու սովորույթները՝ ձեռք բերելով հմտություններ: Երեխաները և մանկավարժները դարձել էին միասնական մի ամբողջություն:
- Հիմնավորել. Արդյո՞ք դաստիարակի կողմից հետազոտվող թեմայի կարևորությունը մեծ է նախադպրոցական կրթության մեջ և ի՞նչ խնդիրների լուծմանն է միտված այն:
  -Իհարկե, դաստիարակի ընտրած թեման արդիական է ու պահանջված նախադպրոցական կրթության և դաստիարակության արդյունավետ գործընթացի համար: Այս թեման երեխաներին ազգային հոգեբանությամբ դաստիարակելու, մշակույթը սերնդեսերունդ փոխանցելու մեծ առաքելություն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հետազոտական աշխատանքի ավարտին ուսումնասիրելով և փորձարկելով, եկա հետևյալ եզրահանգումներին.

- Մանկապարտեզում երեխաների ներդաշնակ և հոգևոր զարգացման առանցքային առանձնահատկություններից մեկը ազգային տոների, ծեսերի յուրացումն է, երաշժտական ճաշակի զարգացումն է, որտեղ երեխան դառնում է այս ամենի կրողը և ակտիվ փոխանցողը:
- Կազմակերպչական գործունեության ընթացքում շփվելով, հաղորդակցվելով հասակակիցների և մեծահասակների հետ երեխան խոսում է, պատմում է, կարծիք է հայտնում, նկարագրում, մեկնաբանում այն ամենը ինչ անում է:
- Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական չափորոշիչների հիմքում ընկած է այն համոզմունքը, որ երեխաների զարգացումը բազմակողմանի է, քանի որ ազգային ոգով զարգացմանը զուգընթաց զարգանում է երեխայի խոսքը, զգացմունքները, ստեղծագործական կարողությունները, երևակայությունն ու ուշադրությունը, սոցիալական և հուզական հմտությունները:

Պարապմունքի ընթացքում հասա այն նպատակներին, որոնք դրվել էին ներածության մեջ:

Այս թեմայի շրջանակներում կուզեի, որ դաստիարակները իրենց հետագա աշխատանքներում ուշադրություն դարձնեին ազգային արժեքների ուսումնասիրմանը, կիրառմանը, պահպանմանը, քանի որ այդ կերպ է հնարավոր ազգային ոգու, մտածելակերպի, վարքի ու բարքի պահպանումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ալիշան Ղ., Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, Վենետիկ, 1895, էջ 302

Հրանուշ Խառատյան – Առաքելյան, Հայ ժողովրդական տոներ, Երևան 2005, էջ 21-31

Սամվել Սուրենի Մկրտչյան, Տոներ, 2010, Երևան, էջ 13-27

Գեղամյան Ա. Ա., <<Ծեսը, ծիսակարգը և սովորույթը՝ որպես մշակույթի ժառանգման և փոխանցման մեխանիզմներ>>

Շահինյան Ա., Կաքավիկ, 2008, Երևան, էջ 28,81

Տեր-Ստեփանյան Ս. Լ., Հայը և իր երգը, 2011, Երևան Տիգրան Մեծ

Առավոտ Լուսո, Նոր տարվա շեմը պետք է հատել միայն ուրախ ծեսերով, https://www.youtube.com/watch?v=FNCu9ExeHEY, Հանրային հեռուստաընկերություն, 31.12.2016

Ավանդական Ամանոր, https://www.youtube.com/watch?v=mRjPm_MWgaw ,Հայ Ասպետ, 26.01.2021

Հայկական ավանդական Ամանորը. պատմում է Գայանե Սամվելյանը, https://www.youtube.com/watch?v=RzhuVkkkv68, Հայ Ձայն, 25.12.2018

Հայկական ավանդական Ամանոր, https://www.youtube.com/watch?v=GgxTz0KF-KU, Գոհար Մկրտչյան, 21.12.2022

Զարխափան. Ամանորյա ծիսական պարագա, https://www.youtube.com/watch?v=oye-Z0CwRiI, 31.12.2012